

**«ԼՂՅ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԶԵՌԵԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով

15-18 սեպտեմբերի 2016թ.

Արցախ (ԼՂՅ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):**

**ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция

15-18 сентября 2016г.

Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳԱՄ-ՕՄՍԱ

ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ

2016

**Յրատարակության Երաշխավորվել Ստեփանակերտի Մերուպ Մաշտոց  
համայնքանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Мащтоц г.Степанакерта**

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

Լ 657

**Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Հ.Ս.Ավամեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալյայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, բ.գ.դ., պրոֆ. **Մ.Ս.Մարգարյան**, բ.գ.դ. **Ս.Մ.Ավամեսյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Քաղդասարյան**, բ.գ.թ., դոց. **Խ.Յ.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Յայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Նարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

**Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Բ.Բալայն**, д.ю.н. **Վ.Բ.Գրզծեա**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Գ.Լ.Սարգսյան**, կ.и.ն., доц. **Ն.Է.Բագդասարյան**, կ.п.н., доц. **Խ.Ծ.Գալստյան**, կ.э.н., доц. **Ե.Ր.Այրիյան**, կ.ю.н. **Ա.Գ.Արյունյան**, կ.ю.н., доц. **Ա.Ա.Մանասյան**, կ.ю.н., доц. **Ս.Գ.Պետիկյան**

Լ 657 «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածում ներառված են «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

**© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016**

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐԹԱԿ (ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Ասի ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀՅ ԳԱԱ փիլիստիայության, սոցիլոգիայի և  
իրավունքի ինստիտուտ, ասպիրանտ  
Գիտական ղեկավար՝ փ.գ.դ., պրոֆեսոր Ալեքսանդր Մանայան  
anihgrigoryan@gmail.com

2015թ. Freedom House-ի գեկույցը Լեռնային Ղարաբաղում ազատությունը գնահատում է 5 բալ 7 բալի սանդղակով, քաղաքացիական ազատությունները՝ 5, իսկ քաղաքական իրավունքները՝ 5<sup>1</sup>: Սա անսահմանեաց ցուցանիշ է մի երկրի համար, որը միջազգայնորեն ճանաչված չէ: Այս ցուցանիշը հատկանիշական է նաև այն առումով, որ գերազանցում է տարածաշրջանում այլ երկրների ցուցանիշները: Նշենք, որ Վրաստանը, որը համարվում է տարածաշրջանում առավել առաջինություն ցուցաբերած երկիր, ժողովրդավարական կարգերի որդեգրումն տեսանկյունից 2015թ. -ի գեկույցի համաձայն հետընթաց է գրանցել այս առումով<sup>2</sup>:

1994թ. անկախությունից ի վեր Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը գրանցել է անսահմանեաց տնտեսական, քաղաքական-սոցիալական և մշակութային աճ: Օտարեկրյա այցելուներին, ովքեր հաճախ նախապարհիք են այցելում ԼՂՀ՝ հետպատերազման թույլ զարգացած երկիր տեսնելու սպասումով, հաճախ զարմացնում է Լեռնային Ղարաբաղի զարգացվածության մակարդակը<sup>3</sup>: Նրանց կարծիքները թերևս ամենայավ գնահատականն են Լեռնային Ղարաբաղի վերակառուցման մեջ իրենց ավանդն ունեցած յուրաքանչյուրի համար և միաժամանակ պարտավորեցնող՝ գոնե պահպանելու այն, ինչ տարիների ընթացքում ծեռք է բերվել թանկ գնով: Վյոդիհանդերձ, երերուն գինադադարը ապրիլյան պատերազմից հետո նոր Մտահոգությունների տեղից տվեց: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրով զրադկոց փորձագետները և հետազոտողները մտավախություն են հայտնում, որ մեծ է նոր՝ ավելի հուժկու եւկալացիայի հնարավորությունը:

---

<sup>1</sup> Freedom House Report on Nagorno-Karabakh, 2015, <https://freedomhouse.org/report/freedom-world/2015/nagorno-karabakh>

<sup>2</sup> Freedom House Reports, Nations in Transit, Georgia, 2016, <https://freedomhouse.org/report/nations-transit/2016/georgia>

<sup>3</sup> Իմ գրույցներից տարբեր ազգության փորձագետների կամ պարզապես այցելուների հետ

Սույն հոդվածով փորձ է արվում ցույց տալ, թե ինչպես է հնարավոր ժողովրդավարական կարգերը ծառայեցնել հակամարտությունների խաղաղ հանգուցալուծմանը, և արդյոք հնարավոր է իրադարձությունների զարգացման նման սցենար:

Հիմնական վերլուծական գաղափարը պտտվում է հակամարտությունների լուծման տեսություններից հայտնի ժողովրդավարական խաղաղության տեսության առանցքի շուրջ: Նշենք, որ հակամարտությունների կարգավորման/կառավարման՝ տեսությունը որպես գիտակարգ համեմատաբար նոր է. այն սկիզբ է առել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Պայմանականորեն նշվում է, որ այս գիտակարգի գոնե արևմտյան դպրոցի հիմնադիրն է Յոհան Գալտունգը, ում կողմից ներմուծվել և լայն շրջանառության է դրվել այն սահմանումը, թե «խաղաղությունը պատերազմի բացակայությունն է»<sup>2</sup>: Այս գիտակարգի շրջանակներում լայնորեն ուսումնասիրության է ենթարկվել ժողովրդավարական խաղաղության տեսությունը, համաձայն որի ժողովրդավարական պետությունները չեն պատերազմում միմյանց դեմ, ինչը խորը քննադատության է ենթարկվել: Յարկ է նշել, որ Եմպիրիկ նյութերը հակառակն են ապացուցում: Մասնավորաբես, պատմության մեջ շատ են դեպքեր, երբ այս հիպոթեզը ապացուցվում է. որպես կանոն բերվում է Գերմանիայի և Ֆրանսիայի օրինակը:

Ժողովրդավարական խաղաղության տեսության արմատները հարկ է փնտրել Իմանուիլ Կանտի «Ճավերժական խաղաղություն» աշխատության մեջ, որտեղ նա թվարկում է կայուն խաղաղության հասնելու հիմնական ուղին՝ օրենքը, որը տեղական մակարդակից արտածվում է միջազգային օրենքի վրա: Կանտը որպես միջազգային օրենքի կամ իրավունքի միակ աղբյուր դիտարկում է ժողովրդավարությունը: Մասնավորաբես, նա նշում է, թե «Յուրաքանչյուր կառավարություն, որը ներկայացնեցական չէ, տծել հրեշ է»<sup>3</sup>:

Ժողովրդավարական խաղաղության հետևողներից Դեյվիթ Ռուսոն, հավատարիմ մնալով այս տեսության հիմնական գծին, այն է՝ ժողովրդավարությունները չեն դիմում բռնի ուժի, ցույց է տալիս, որ ժողովրդավարությունները, առերեսվելով ավտորիտար վարչակարգի, հաճախ դիմում են ուժի՝ ի վիճակի չլինելով ճշգրտորեն հաշվարկել հակամարտության ելքը ոչ բռնի միջոցների կիրառության պարագայում<sup>4</sup>:

1816-1982թթ. հակամարտությունների օրինակները ապացուցում են այս հիպոթեզը:

<sup>1</sup> Տերմինաբանական տեսանկյունից գիտական գրականության մեջ պայմանավորվածություն չկա, թե այս երկու տերմիններից որն է գիտականորեն առավել ճշգրիտ կիրառել

<sup>2</sup> Galtung J., Negative and Positive Peace, 1964, p.3.

<sup>3</sup> Kant I., Toward Perpetual Peace: A philosophical sketch, translated by M. C. Smith, London, 1917.

<sup>4</sup> Roussaeu D., Democracy and War Institutions, Standford University Press, 2005 p.5.

Վարչակարգ	Պատերազմների քանակը
Ժողովրդավարություն ընդեմ ժողովրդավարություն	0
Ավտորիտարիզմ ընդեմ ժողովրդավարության	50
Ավտորիտարիզմ ընդեմ ավտորիտարիզմի	68

Այս գիծը պատկերավոր նկարագրում էն Բուենո դե Մեսկիտան և Լամանը աղավնու և բացեի օրինակով, որտեղ աղավնին դիմում է ուժի պաշտպանության նկատառումներից ելելով<sup>1</sup>:

Գիտական տերմինաբանությամբ ժողովրդավարական խաղաղության տեսությունը ուղիղ կապ է Ենթադրում պետության ինստիտուցիոնալ կառուցվածքի և արտաքին քաղաքականության քնագավառում որոշումների կայացման միջև։ Մասնավորպես, այս պարագայում այնպիսի փոփոխականներ են առաջ քաշվում, ինչպես օրինակ՝

1. Ընդդիմադիր քաղաքական ուժեր,
2. Ցանկացած արտաքին քաղաքական որոշումների անորոշ ելքը՝ որպես սպառնալիք իշխանությանը,
3. Պատերազմական գործողությունների դեպքում կրած վնասները փոխհատուցելուց խուսանավելու հնարավորությունը։

Այս եզրահանգումները ընդիհանուր առմամբ տեղակորվում են Դարաբայյան հակամարտության ընդիհանուր տրամաբանության մեջ։ Այս կապակցության հարկ է անդրադարձ կատարել Մեսկիլդ և Սևայդերի այն փաստարկին, թե անցումային ժողովրդավարությունները հակված են ցուցաբերելու առավել պատերազմական վարք համեմատած ժողովրդավարական ավանդություններ զարգացրած այլ պետությունների հետ<sup>2</sup>։ Որպես հիմնավորում Նշվում է, որ իշխանությունների հեռացումից հետո տարբեր շահառու իմբերը, նախկին ընտրախավերը հնարավորություն են ձեռք բերում իրականացնել իրենց ամբիցիաները՝ համախմբելով հասարակության տարբեր շերտեր։ Սա հիմնականում կյանքի է կոչվում 1. Կեղծ գաղափարախոսության տարածման, 2. արտաքին թշնամու դեմոնիզացիայի<sup>3</sup>, 3. զանգվածային լրատվամիջոցների կառավարման և հասարակական և ռազմական սեկտորի միջև հզոր կապերի ձևավորման ճանապարհով։ Նման իրավիճակը հիմնականում տիպական է ավտորիտար ռեժիմներին, երբ հօգուտ ռազմական ուժի դիմելու կայացված որոշումները

<sup>1</sup> Bueno de Mesquita and Lalman, 1992, մեջբերված է. Rousseau D, Democracy and War Institutions, p. 23.

<sup>2</sup> Mansfield E. and Snyder J., Democratization and the Danger of War, International Security, 20 (1), 1995, p. 5 –38.

<sup>3</sup> A. Adibekyan, A. Elibegova, Armenianophobia in Azerbaijan, Yerevan, 2015, p. 92-100.

շահարկվում են Ներքին լսարանում որոշակի նպատակի հասնելու համար:

Տեսական այս հիմքը լույս է սփռում Լեռնային Ղարաբաղի հակամարտության դիևամիկայի և Ներքին տրամարանության վրա: Լեռնային Ղարաբաղում 1991թ.-ից ի վեր ծևավորված քաղաքական վարչակարգը ընութեագրվում է որպես ժողովրդավարական: Ծրչափակման մեջ զնտվող դե ֆակտո պետության պարագայում 25 տարիների ընթացքում ժողովրդավարական նման ավանդույթ զարգացնելը բարձր է գնահատվում միջազգային տարբեր Ներկայացուցիչների կողմից<sup>1</sup>: Այս առումով հարկ է անդրադառնալ պատերազմի ունեցած ազդեցությանը ժողովրդավարացման վրա: Գոյություն ունեն տեսություններ, որոնք միտված են վեր հանելու պատերազմի վնասակար հետևանքները պետության ժողովրդավարացման գործընթացների վրա: Մասնավորապես, Յորովհցը նշում է քաղաքական և տնտեսական բարեփոխումների վրա պատերազմի բացասական հետևանքների հետևյալ հիմնական մեխանիզմները. 1. շեղում քաղաքական և տնտեսական օրակարգից, 2. հետպատերազմյան մեկուսացում, 3. իշխանության պարտություն, թուլացում, ինչպես նաև պետության ռազմականացում<sup>2</sup>: Զգեսք է մոռանալ, որ նշված գործոնները վտանգավոր հետևանքների են հանգեցնում կայացած և միջազգայնորեն ճանաչված պետությունների պարագայում:

Լեռնային Ղարաբաղի հանրապետության՝ որպես դե-ֆակտո անկախ պետության պարագայում պատերազմական վիճակը առավել անդառնալի հետևանքների կարող է հանգեցնել: Այս իմաստով ժողովրդավարության և հակամարտությունների կարգավորման բազմաշերտ և բազմարովանդակ փոխկապակցվածության լուսաբանումը հնարավորություն է ստեղծում անգևահատելի բանահիներ տրամադրել այսպես կոչված «Երկարատև հակամարտությունների» թևողվը բացելու համար: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որը դասվում է նման հակամարտությունների շարքին<sup>3</sup>, նմանօրինակ հետազոտությունը կարևորություն է ստանում ոչ միայն գրականության մեջ գոյություն ունեղող բացը լրացնելու, այլ նաև համապատասխան քաղաքականության առաջարկություններ (policy recommendation) մշակելու համար:

Ինչպես տեսնում ենք, Լեռնային Ղարաբաղի հանրապետության ձեռքբերումների ֆոնին շատ են նաև մարտահրավերները: Ապրիլյան դեպքերը, ինչպես նաև դրան հաջորդած իրադարձությունները ներքաղաքական կյանքում սպառնալիք են Լեռնային Ղարաբաղի՝ որպես կայացած ժողովրդավարության հասնելուն:

<sup>1</sup> ԼՂՀ-ում ըստրական գործընթացը՝ միջազգային չափանիշներին համապատասխան. Եվրախորհրդարանում Արցախի խումբ, 4 մայիս 2015,  
[http://civilnet.am/2015/05/04/artsakh-group-european-parliament-nkr-elections/#.V4HpV\\_krLIU](http://civilnet.am/2015/05/04/artsakh-group-european-parliament-nkr-elections/#.V4HpV_krLIU)

<sup>2</sup> Donald L. Horowitz, Ethnic Groups in Conflict, Univirstry of California Press, Berkley, 1985

<sup>3</sup> Broers L., "From frozen conflict to enduring rivalry", the Journal of Nationalism and Ethnicity, Volume 43, Issue 4, 2015.

## **ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՐԳՎԱԿՈՐՍԱՆ ՀԱՐԹԱԿ (ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղ, հակամարտությունների կարգա-  
վորում, ժողովրդավարական խաղաղության տեսություն**

21-րդ դարում ժողովրդավարական կարգերը վերարժենորվում եմ՝ պայմանավորված համաշխարհային բեմում շարունակվող և ծագող հակամարտություններով։ Այս առօւմով ժողովրդավարական խաղաղության տեսությունը ձեռք է բերում նոր իմաստ՝ չնայած իր համամետաբար երիտասարդ լինելուն և մեծ ընսադատության արժանանալուն։ Ելնելով թեմայի հրատապությունից՝ սույն ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում վերհանելու ժողովրդավարական կարգերի և հակամարտությունների կարգավորման փոխկապակցվածությունը։ Լեռնային Ղարաբաղի հակամարտության օրինակով։ Յիմք ընդունելով այս ոլորտում ունեցած տեսական բազան՝ փորձ կարվի ցույց տալ, թե Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում հաստատված ժողովրդավարական կարգերը ինչպես են ազդում հակամարտության կարգավորման հիմնական տրամաբանության վրա՝ միաժամանակ հաստատելով կամ հերքելով վերոնշյալ ժողովրդավարական խաղաղության տեսությունը։

*Ани Григорян*

## **ДЕМОКРАТИЯ КАК ПЛАТФОРМА ДЛЯ РАЗРЕШЕНИЯ КОНФЛИКТОВ(НА ПРИМЕРЕ КОНФЛИКТА НАГОРНОГО КАРАБАХА)**

**Ключевые слова:** Нагорный Карабах, разрешение конфликтов, теория демократического мира

Данная статья исследует новые механизмы резолюции конфликтов на примере Нагорно-Карабахского конфликта. Основное исследование было сделано в рамках теории демократического мира этим изъясняя вопрос о взаимоотношении демократии и резолюции конфликтов. В частности статья демонстрирует что демократические институты влияют на динамику резолюции конфликтов таким образом требуя тщательного междисциплинарного изучения данной сферы. В рамках исследования изучилась как теория И. Канта как основателя теории демократического мира так и более современные подходы учитывая особенности дисциплины.

*Ani Grigoryan*

**DEMOCRATIC PEACE THEORY AS A PLATFORM FOR CONFLICT RESOLUTION: THE CASE OF NAGORNO-KARABAKH CONFLICT**

**Key words:** *Nagorno-Karabakh, Conflict Resolution, Democratic peace theory*

The current paper aims at addressing new mechanisms of conflict resolution on the example of Nagorno-Karabakh conflict. The main analysis has been carried out within the framework of democratic peace theory, thus shedding light upon the interconnection between democracy and conflict resolution. Particularly it demonstrates that democratic institutions leave their imprint on the dynamics of conflict resolution requiring deep investigation in this understudies field.